ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«15» ապրիլի 2022 թվականի N 64-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ «ԲԱՍԿԵՏԲՈԼԻ Ա-ԼԻԳԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԲԱՍԿԵՏԲՈԼԱՅԻՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով «Բասկետբոլի Ա-Լիգա» հասարակական կազմակերպության գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2022 թվականի հունվարի 24-ին N 1328 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Հայաստանի «Բասկետբոլի Ա-Լիգա» հասարակական կազմակերպությանը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի Չայկովսկու փողոցի հարևանությամբ գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ 450,0 (չորս հարյուր հիսուն) քառակուսի մետր մակերեսով հողամասի վրա կառուցելու բասկետբոլի խաղահրապարակ:
2. Բասկետբոլի խաղահրապարակի կառուցումն իրականացնել երկու ամսվա ընթացքում և կառուցված խաղահրապարակը՝ որպես սեփականություն հանձնել Գյումրի համայնքին:
3. Բասկետբոլի խաղահրապարակի կառուցման, հետագա շահագործման և այլ պայմաններն ու պահանջները մանրամասնել համայնքի ղեկավարի որոշումներով և պայմանագրերով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Կողմ (24) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Վ.Սամսոնյան
Գ.Մելիքյան
Լ.Սանոյան
Մ.Սահակյան
Ն.Պողոսյան
Գ.Պասկևիչյան
Խ.Վարաժյան
Ս.Հովհաննիսյան
Հ.Ասատրյան
Ս.Խուբեսարյան
Ա.Բեյբուտյան
Ա.Պապիկյան
Ք.Հարությունյան
Ն.Ղազարյան
Ա.Մաթևոսյան
Զ.Միքայելյան

Ե.Խանամիրյան
Կ.Սոսյան
Ս.Ադամյան
Գ.Մանուկյան
Ն.Միրզոյան
Հ.Մարգարյան
Կ.Մալխասյան
Կ.Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԿԱՐԵՆ ԲԱԴԱԼՅԱՆ

ք. Գյումրի
«15» ապրիլի 2022 թվական